# Աստղերի քարտեզ

Տրված է աստղերի վանդակավոր քառակուսաձև քարտեզ: Հարկավոր է հաշվել միևնույն հորիզոնականում, ուղղահայացում կամ անկյունագծում գտնվող աստղերի եռյակների քանակը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են քարտեզի n չափը (1 ≤ n ≤ 100) : Հաջորդ n տողերից յուրաքանչյուրում տրված է n սիմվոլ, աստղերը նշված են աստղանիշներով, իսկ դատարկ վանդակները` կետերով:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ` աստղերի եռյակների քանակը:

## Օրինակ.

**Մուտք.**

```
5
*.***
.*...
*....
.....
*....
```

**Ելք.**

```
6
```